

ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՄԵԿՆՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄԸ

Տաթևիկ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

Բանալի բառեր. դաշտային աշխատանք, աշխատանքային միգրանտներ, միգրացիոն դրդապատճառներ, դրամական փոխանցումներ, միգրացիայի ազդեցությունը ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակի վրա

Վերջին մի քանի տարիներին Հայաստանից միգրացիոն հոսքերի ընդլայնման միտումներն ահազանգ են խորքային ուսումնասիրելու և վերլուծելու արտագնա աշխատանքի մեկնող միգրանտների հիմնական դրդապատճառները և այն խնդիրները, որոնք մատնանշում են Հայաստանում: Այս համատեքստում ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի ֆինանսավորած «Ասպիրանտների հետազոտությունների աջակցություն ծրագիր-2016» մրցույթի արդյունքում իրականացվել է դաշտային աշխատանք՝ համապատասխան հարցաթերթի մշակմամբ: Կարևորելով առանձին անհատի մակարդակով միգրացիայի պատճառների և հետևյալների ուսումնասիրությունը՝ իրականացված դաշտային աշխատանքը հնարավորություն է տվել հասկանալ միգրացիոն մեխանիզմի ամբողջական պատկերը: Հետազոտության շրջանակներում ընդգրկվել են 1526 միգրանտ կամ պոտենցիալ միգրանտ Հայաստանի 10 մարզերից: Հարցվածների բաշխումն ըստ մարզերի և Երևան քաղաքի բերված է աղյուսակում:

Աղյուսակ 1. Հարցվողների բաշխումը ըստ մարզերի և Երևան քաղաքի

Հ/Հ	Մարզի անվանումը	Հարցվողների թիվը	Հարցվողների տեսակարար կշիռը ընդհանուր հարցվողների մեջ (%-ով)
1	Երևան	454	29.8
2	Արագածոտն	85	5.6
3	Արարատ	133	8.7
4	Արմավիր	120	7.9
5	Գեղարքունիք	169	11.1
6	Լոռի	152	10.0
7	Կոտայք	105	6.9
8	Շիրակ	189	12.4
9	Սյունիք	68	4.5
10	Տավուշ	51	3.3
	Ընդհանուր	1526	100.0

Հարցվողներից 1111-ը (72.8%) տղամարդիկ են, 415-ը (27.2%)՝ կանայք: Հարցվողների 799-ը (52.4%) միգրանտներ են (նախկինում եղել են արտագնա աշխատանքի մեկնած), իսկ 727-ը (47.6%) պոտենցիալ միգրանտ են (քաղաքացիներ, ովքեր հայտարարել են, որ մտադիր են առաջիկա մեկ տարում մեկնել արտագնա աշխատանքի): Միաժամանակ պետք է նկատել, որ հարցվողների 58.4%-ը եղել են քաղաքաբնակ, իսկ մնացած 41.6%-ը գյուղաբնակ: Հարցվողների 65%-ը ամուսնացած են, իսկ 26%-ը՝ չամուսնացած: Ռիսկային է հատկապես ամուսնացած անձանց «միգրանտ» կամ «պոտենցիալ միգրանտ» կարգավիճակը, քանզի փորձը ցույց է տալիս, որ այս պարագայում առաջանում է ընտանիքների վերամիավորման խնդիրը, այսինքն, հետագայում միգրանտների թիվը ընդլայնվելու միտում կունենա:

Գնահատելով իրենց ընտանիքների սոցիալ տնտեսական վիճակը՝ միգրանտների (պոտենցիալ միգրանտների) ընդամենը 0.5%-ն է նշել, որ իրենց ընտանիքը գտնվում է գերազանց վիճակում, 8%-ը նշել է, որ իրենց ընտանիքը գտնվում է լավ վիճակում, 59.8%-ը՝ բավարար վիճակ, իսկ 31.7%-ը՝ անբավարար: Վերջին երեք տարիների ընթացքում հարցվող ընտանիքների ընդամենը 7.5%-ում է սոցիալ-տնտեսական վիճակը բարելավվել, 47.2% ընտանիքներում վիճակը մնացել է նույնը, իսկ 45.3%-ում վատացել է: Ակնհայտ է, որ արտագնա աշխատանքի մեկնելը չի բերել ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակի որևէ էական դրական փոփոխություն: Ընտանիքները, ըստ էության, կարողացել են արտագնա աշխատանքի ժամանակ ստացած գումարների հաշվին լուծել իրենց ընթացիկ խնդիրները՝ հոգալով սննդի, կոմունալ վճարների, հագուստի և այլ նմանատիպ ծախսերը: Այդուհանդերձ, կարևոր է նաև հաշվի առնել այն փաստը, որ հարցվողների հիմնական մասը որպես ընդունման երկիր նշել են Ռուսաստանի Ռաշնություն, իսկ վերջին մի քանի տարիներին Ռուսաստանի նկատմամբ կիրառվող տնտեսական պատժամիջոցները, ինչպես նաև նավթի գների կտրուկ բարձրացումը վաթսարացրել են նաև Ռուսաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակը, ինչի արդյունքում կրճատվել է այնտեղից եկող դրամական փոխանցումների ծավալը: Իսկ արտագնա աշխատանքի ազդեցությունը ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակի փոփոխության վրա գնահատվել է բավական դրական հարցվողների շրջանում: Մասնավորապես, միգրանտների ճնշող մեծամասնությունը՝ 91.9%-ը, գտնում է, որ արտագնա աշխատանքի մեկնումը ունեցել է ընտանիքի համար դրական նշանակություն և միայն շատ փոքր մասը՝ (1.8%), գտնում է, որ մեկնելը ունեցել է բացասական ազդեցություն:


Պոտենցիալ միգրանտներին տրվել է նաև հետևյալ հարցը՝ «Ձեր կարծիքով արտագնա աշխատանքի մեկնելը ինչպե՞ս կազդի Ձեր ընտանիքի

սոցիալ-տնտեսական վիճակի փոփոխման վրա”: Պոտենցիալ միգրանտներից միայն 14%-ն է վստահ, որ արտագնա աշխատանքի մեկնումը կունենա դրական էական ազդեցություն իրենց ընտանիքի համար, իսկ մեծամասնությունը՝ 65%-ը, հույս ունի, որ արտագնա աշխատանքի մեկնելը կունենա թեկուզ ոչ էական, սակայն դրական ազդեցություն: Մտահոգիչ է, որ հարցվողների 21%-ը դժվարացել է պատասխանել այս հարցին, այլ կերպ ասած՝ նրանք չգիտեն (չեն կարողանում կամ վստահ չեն), թե ինչ ազդեցություն կունենա արտագնա աշխատանքի մեկնելը, սակայն պատրաստվում են մեկնել: Սա խոսում է այն մասին, որ ՀՀ-ում այդ անձիք կամ չեն կարողանում գտնել աշխատանք, կամ եղած աշխատանքը ակնհայտորեն չի ապահովում նրանց ընտանիքների համար բավարար սոցիալ-տնտեսական պայմաններ և նրանք փորձում են խնդրի լուծումը գտնել արտագնա աշխատանքի մեկնելու միջոցով: Հետազոտության շրջանակում կարևորվել է նաև ԵԱՏՄ երկրների հետ հարցվողների միգրացիոն կապերի բացահայտումն ու վերլուծությունը, ուստի, առաջին հերթին, հարց է տրվել, թե արդյոք ունեն հարազատներ, բարեկամներ, ընկերներ, ովքեր բնակվում (գտնվում) են ԵԱՏՄ-ում:

ԵԱՏՄ երկրներում բնակվում կամ գտնվում են հիմնականում ոչ մտերիմ բարեկամները, ծանոթները: Մշտական բնակություն ունեցողների գերակշիռ մասը կազմում են ոչ մտերիմ բարեկամները՝ 540 անձ, այնուհետև՝ ընկերները, ծանոթները՝ 356 անձ: Ժամանակավոր բնակություն ունեցողների մեծ մասը կազմում են ընկերները, ծանոթները՝ 497 անձ, այլ, ոչ մտերիմ բարեկամները՝ 246 անձ: Արտերկրում ժամանակավոր գտնվող ծնողների թիվն (150) էականորեն մեծ է մշտական բնակվող ծնողների թվից (37): Հարցվողների 8.5%-ը (130 անձ) պատասխանել է, որ ԵԱՏՄ երկրներում բնակվող կամ գտնվող որևէ հարազատ, բարեկամ, ընկեր չունի:

ԵԱՏՄ երկրներում մշտապես բնակվող ընկերներ, ծանոթներ ունեցող անձանց 63%-ը նշել են, որ դրամական որևէ աջակցություն չեն ստանում նրանցից, 7%-ը աջակցություն ստանում է խիստ անհրաժեշտության դեպքում, 4.5%-ը՝ տարին մեկ անգամ: Ժամանակավոր գտնվող ընկերներ, ծանոթներ ունեցող անձանց 50%-ը, նշել են որ դրամական որևէ աջակցություն չեն ստանում, 11%-ը աջակցություն ստանում է խիստ անհրաժեշտության դեպքում, 5.8%-ը՝ տարին մեկ անգամ: Հարցվողների միայն 6.6%-ն է ամեն ամիս կանոնավոր ստանում աջակցություն, իսկ 4.1%-ը՝ երկու ամիսը մեկ անգամ: Եթե դիտարկելու լինենք, թե ինչ հաճախականությամբ են արտերկրից դրամական աջակցություն ստանում միգրանտները և պոտենցիալ միգրանտները, ապա պարզ է դառնում, որ էական տարբերություն նրանց մեջ չկա: Այսպես, միգրանտների 68%-ը և պոտենցիալ միգրանտների 61.8%-ը դրամական աջակցություն չեն ստանում արտերկրի իրենց բարեկամներ:

րից, ծանոթներից: Որոշակի պարբերականությամբ՝ ամիսը մեկ անգամ աջակցություն են ստանում միգրանտների 7.4%-ը և պոտենցիալ միգրանտների 7%, երկու ամիսը մեկ անգամ՝ միգրանտների 3.3%-ը և պոտենցիալ միգրանտների 4.5%-ը: Վերջին 1 տարում ԵԱՏՄ երկրներում գտնվող հարազատներից, բարեկամներից, ընկերներից ստացվող դրամական աջակցության ամսական միջին չափը կազմել է մոտ 216000 դրամը: Ընդ որում, հարցվողների 41.1%-ի շրջանում դրամական աջակցությունը 50000-100000 ՀՀ դրամի միջակայքում է:




Պատկեր 1. ԵԱՏՄ երկրներից ստացվող դրամական աջակցության ամսական միջին չափը, (%)

Մինչև 50000 ՀՀ դրամ աջակցություն ստացողների թիվը կազմում է 24.9%, հարցվողների 21.8%-ը միջին չափով ստանում է 100000-200000 ՀՀ դրամ աջակցություն: Ավելի մեծ գումարներ՝ 200000 ՀՀ դրամից ավելի աջակցություն ստանում են հարցվողների 12.2%-ը:

Հաշվի առնելով հարցման ենթարկված ընտանիքների և ընտանիքի անդամների թիվը՝ կարող ենք գնահատել, որ մեկ ընտանիքի հաշվով փոխանցված գումարը կազմել է միջինը ամսական 110337 ՀՀ դրամ, իսկ ընտանիքի յուրաքանչյուր անդամի հաշվով այդ գումարը կազմել է միջինը 22380 ՀՀ դրամ:

Ըստ ՀՀ մարզերի մեկ շնչին ընկնող գումարի միջին ամսական չափի վերլուծությունը ցույց է տալիս, որ Արագածոտնի մարզի ընտանիքի յուրաքանչյուր անդամին բաժին ընկնող գումարը (43798 ՀՀ դրամ) մյուս մարզերի համեմատ ամենաբարձրն է: Համեմատաբար բարձր են նաև Արմավիրի և Գեղարքունիքի մարզերում, ընտանիքի մեկ անդամին ընկնող գումարը՝ համապատասխանաբար 39594 ՀՀ դրամ և 34949 ՀՀ դրամ: Հետաքրքիր է այն, որ ըստ ՀՀ մարզերի բաշխվածության վերլուծության համեմատության համատեքստում պարզ է դառնում, որ Արագածոտնի մարզում, որտեղ մեկ

շնչին բաժին ընկնող դրամական միջին օգնությունը ամենաբարձրն է, բաշխված են հարցվողների ընդամենը 5.6%-ը:



Գծապատկեր 2. Ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար դրամական աջակցության ամսական միջին չափն ըստ ՀՀ մարզերի (ՀՀ դրամով)

ԵԱՏՄ երկրներից դրամական աջակցություն ստացող ընտանիքների գերակշռող մասի՝ 31.9%-ի համար ստացած գումարը կազմում է ընտանիքի եկամուտի մինչև 30%-ը: Ընտանիքների մոտավորապես 26.6%-ի համար դրամական աջակցությունը միջին չափով կազմում է իրենց ընտանիքի եկամուտի մինչև 50%-ը, իսկ 21.6%-ի համար այն չի գերազանցում ընդհանուր եկամտի 10%-ը: Ընտանիքների 15.8%-ի համար արտերկրից փոխանցումները կազմում են ընտանիքի եկամտի 50%-ից ավելին: Ընտանիքներին արտերկրից կատարված դրամական փոխանցումների աջակցության օգտակարության միջին ցուցանիշը կազմում է մոտ 30%, ինչը նշանակում է, որ արտերկրից ստացված աջակցությունը կարևոր դերակատարում ունի ՀՀ-ում գտնվող միգրանտների (պոտենցիալ միգրանտների) համար: ԵԱՏՄ երկրներից ստացվող դրամական աջակցությունը հարցվող ընտանիքները օգտագործում են հետևյալ հինգ հիմնական ուղղություններով.

- ✓ կոմունալ վճարները կատարելու համար (20.6%),
- ✓ սննդի ապահովման համար (20.1%),
- ✓ հագուստ գնելու համար (15.8%),
- ✓ առողջապահական խնդիրներ լուծելու նպատակով (13%):
- ✓ պարտքերի մարման համար (11.1%):

Հարցման շրջանակներում տրվել է նաև մոտակա մեկ տարում արտերկիր մեկնելու ցանկություն ունենալու վերաբերյալ հարցը, ինչին ի պատասխան հարցվողների 86.8%-ը, նշել է, որ մոտակա մեկ տարում կմեկնի արտագնա աշխատանքի, 4.3%-ը դժվարացել է պատասխանել, իսկ 8.9%-ը

նշել է, որ չի պատրաստվում մեկնել արտերկիր աշխատանքի համար: Ընդ որում, ինչպես ցույց է տալիս վերլուծությունը, հարցվողների ճնշող մեծամասնությունը՝ 77.1%-ը, նախատեսել է մեկնել ՌԴ, 1.7%-ը՝ Բելառուսի Հանրապետություն, 1.4%-ը՝ Ղազախստանի Հանրապետություն, 4.3%՝ ԱՄՆ, 10.8%՝ Եվրոպական երկրներ: Այս վերլուծությունը ցույց է տալիս, որ ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ առաջիկա մեկ տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունից միգրացիոն հոսքը հիմնականում ուղղված են լինելու դեպի ԵԱՏՄ երկրներ, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնություն:

Իսկ ըստ ՀՀ մարզերի արտագնա աշխատանքի մեկնելու տրամադրվածության վերլուծությունը ցույց է տալիս, Շիրակի մարզում հարցվողները ամենաշատն են հակված մեկնելու արտագնա աշխատանքի, իսկ Գեղարքունիքի մարզում առավելագույնն է աշխատանքի չմեկնելու հակվածությունը: Արտագնա աշխատանքի մեկնելու ցանկություն ունեցողների բաշխումն ըստ տարիքային խմբերի վերլուծության արդյունքում կարող ենք եզրահանգել, որ արտագնա աշխատանքի մեկնելու առավել մեծ տրամադրվածություն ունեն 30-44 տարեկան հարցվողները (նույն տարիքային խմբի 37%-ը), իսկ ամենաքիչը տրամադրված են մեկնելու արտագնա աշխատանքի 55 և ավելի տարեկանները (նույն տարիքային խմբի 9.7%-ը):


Հատկանշական է նաև այն, որ արտագնա աշխատանքի մեկնել ցանկացողների համեմատաբար մեծ մասը՝ 35.1%-ը, ունի ընդհանուր միջնակարգ կրթություն (չունեն մասնագիտական կրթություն), 32.1%-ը՝ բարձրագույն կրթություն, 20.1%-ը՝ միջին մասնագիտական կրթություն, իսկ 12.7%-ը՝ նախնական մասնագիտական կրթություն: Այս վերլուծությունը ցույց է տալիս, որ թե՛ մասնագիտական կրթություն ունեցողները, և թե՛ մասնագիտական կրթություն չունեցողները միատեսակ ակտիվությամբ ձգտում են մեկնել արտագնա աշխատանքի: Ուսումնասիրվել է նաև ըստ կոնկրետ երկիր մեկնել նախընտրելու պատճառները, համաձայն որի հարցվողները կարծում են, որ իրենց նախընտրած երկրում կգտնեն բարձր վարձատրվող աշխատանք (30.4%): Երկրորդ կարևոր պատճառը երկրի ընտրության համար այդ երկրի լեզվին տիրապետելն է (18.9%): Կարևոր է նաև ընտրված երկրում բարեկամների, ընկերների, ծանոթների առկայությունն է (13.9%): Արտագնա աշխատանքի մեկնման երկրի նախընտրության համար կարևոր պատճառներից են այնտեղ մասնագիտությամբ աշխատանք գտնելը (11.8%) և երկիր մուտք գործելու մատչելիությունը (12.3%): Հարցվողները, ովքեր նախընտրելի երկիր ընտրել են Ռուսաստանը, որպես հիմնական պատճառներ նշել են բարձր վարձատրվող աշխատանքի հնարավորությունը (29.7%), երկրի պետական լեզվին տիրապետելը (20.9%), երկիր հեշտությամբ մուտք գործելու հնարավորությունը (13.6%), այնտեղ բազմաթիվ ծանոթներ ունենալը

(13%), ինչպես նաև ՌԴ-ում աշխատանքի և բնակության նախկին փորձը (12.3%): Եվրոպական երկրներ ավելի շատ նախընտրում են մեկնել բարձր վարձատրվող աշխատանք գտնելու հույսով (33.4%), այնտեղ բազմաթիվ ծանոթներ ունենալու պատճառով (21.9%), մասնագիտությամբ աշխատանք գտնելու հույսով (20.3%): ԱՄՆ-ում արտագնա աշխատանքի մեկնելու համար հիմնական պատճառներ են բարձր վարձատրվող աշխատանք գտնելը (36.9%), այդ երկրի պետական լեզվին տիրապետելը (23.1%), մասնագիտությամբ աշխատանք գտնելը (21.3%): Բելառուս նախատեսում են մեկնել հիմնականում հետևյալ պատճառներով՝ բարձր վարձատրվող աշխատանքի ակնկալիք (31.3%), այնտեղ բազմաթիվ ծանոթներ ունենալը (18.8%), մասնագիտությամբ աշխատանք գտնելու ակնկալիքը (16.7%), հաղորդակցման լեզվին (ռուսերեն) տիրապետելը (12.5%): Իսկ Ղազախստան հիմնականում մեկնում են, որովհետև համոզված են, որ կգտնեն բարձր վարձատրվող աշխատանք (30%), մասնագիտությամբ աշխատանք (18%), ունեն այնտեղ բազմաթիվ ծանոթներ (18%), ունեն այնտեղ բնակության փորձ (12%), տվյալ երկրի մուտք գործելը հեշտ է (10%): Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ արտագնա աշխատանքի մեկնելու հիմնական պատճառները կարելի է բաժանել երեք հիմնական խմբերի.

✓ ֆինանսա-տնտեսական պատճառներ՝ 57.5%, որից՝ ՀՀ-ում ցածր աշխատավարձը՝ 22.8%, արտերկրում բարձր աշխատավարձի ակնկալիքը՝ 17.1%, ընտանիքին ֆինանսապես ապահովելու ակնկալիքը՝ 17.6%;

✓ աշխատանքի բացակայություն՝ 25.7%, որից՝ ՀՀ-ում հարցվողի մասնագիտությամբ աշխատատեղերի բացակայությունը՝ 6.7%, ՀՀ-ում աշխատանքի բացակայությունը 19%:

ՀՀ-ում առկա ոչ նպաստավոր պայմանները՝ ընդհանուր 16.1%, որից՝ ՀՀ-ում տիրող ոչ բարենպաստ բարոյահոգեբանական իրավիճակը՝ 5.2%, ՀՀ տնտեսական զարգացման նկատմամբ ունեցած անվստահությունը՝ 8.7% և ՀՀ-ում բիզնեսով զբաղվելու դժվարությունները՝ 2.2%: Եթե վերլուծենք արտագնա աշխատանքի մեկնելու պատճառները ըստ տարիքային խմբերի, ապա կարող ենք եզրակացնել, որ 16-29 տարեկանների շրջանում արտագնա աշխատանքի մեկնելու ակտուալ պատճառ է արտերկրում բարձր աշխատավարձ ստանալու ակնկալիքը (32.4%): Երիտասարդների 31.4%-ը որպես պատճառ նշել է նաև ՀՀ-ում աշխատանքի ցածր վարձատրությունը: Հետաքրքիր միտում է այն, որ ավելի բարձր տարիքային խմբերում արտերկրում բարձր աշխատավարձ ստանալու ակնկալիքը նվազման միտում ունի տվյալ տարիքային խմբի հարցվողների շրջանում: Այսպես, 30-44 տարեկանների 36.6%-ն է պատասխանել, որ ակնկալում է արտերկրում ստանալ բարձր աշխատավարձ: Մինչդեռ նույն խմբում 39.1%-ը նշել է, որ արտագնա աշխատանքի մեկնելու պատճառ է ՀՀ-ում աշխատանքի բացակայությունը:



Գծապատկեր 3. Արտագնա աշխատանքի մեկնելու պատճառները

Արտագնա աշխատանքի մեկնելու և արտերկրում աշխատանք գտնելու համար միգրանտները (պոտենցիալ միգրանտները) հիմնականում աջակցություն են ստացել կամ ակնկալում են ստանալ արտերկրում բնակվող կամ գտնվող հարազատներից, բարեկամներից կամ ծանոթներից (42.2%): ՀՀ-ում բնակվող ընկերները և բարեկամները նույնպես փոքր դեր չեն խաղում մեկնելու համար աջակցության ցուցաբերման հարցում (19.5%): Մարդկանց մի որոշ մաս էլ (28.3%) պատասխանել է, որ արտագնա աշխատանքի մեկնել է կամ պատրաստվում է մեկնել առանց որևէ մեկի աջակցությամբ:

Այսպիսով, ամփոփելով հետազոտության հիմնական արդյունքները, կարող ենք նշել, որ արտագնա աշխատանքի մեկնողների կողմից արտերկրում իրականացվում է հիմնականում բանվորական աշխատանք՝ անկախ նրանց մասնագիտական կրթությունից: Հատկանշական է, որ շատ ՀՀ քաղաքացիներ, ովքեր ունեն բարձրագույն կրթություն, արտերկրում ստիպված կատարում են ավելի ցածր կրթական մակարդակ պահանջող աշխատանք: Արտերկրում գտնվելիս միգրանտները ունեցել են լեզվի, փաստաթղթերի, միգրացիոն ծառայությունների հետ կապված խնդիրներ: Ելնելով ասվածից՝ կարևորվում է մինչև արտագնա աշխատանքի մեկնելը միգրանտների շրջանում համապատասխան թրեյնինգների անցկացումը: Չնայած միգրացիայի արդյունքում ստացած փոքր գումարներին և մի շարք այլ խնդիրներին՝ միգրանտներն ընդհանուր առմամբ բավարարված են իրենց վաստակած գումարից, ինչը մեծապես պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ-ում մնալով նրանք հույս չեն ունեցել վաստակելու նման գումարներ:

Տաթևիկ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հայաստանից մեկնող աշխատանքային միգրանտների խնդիրների վերհանումը

Բանալի բառեր. դաշտային աշխատանք, աշխատանքային միգրանտներ, միգրացիոն դրդապատճառներ, դրամական փոխանցումներ, միգրացիայի ազդեցությունը ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակի վրա

Վերջին մի քանի տարիներին Հայաստանից միգրացիոն հոսքերը ահազանգ են խորքային ուսումնասիրելու և վերլուծելու արտագնա աշխատանքի մեկնող միգրանտների հիմնական դրդապատճառները և այն խնդիրները, որոնք նրանք մատնանշում են Հայաստանում: Կարևորելով առանձին անհատի մակարդակով միգրացիայի պատճառների և հետևանքների ուսումնասիրությունը՝ իրականացված դաշտային աշխատանքը հնարավորություն է տվել հասկանալ միգրացիոն մեխանիզմի ամբողջական պատկերը: Արտագնա աշխատանքի ժամանակ միգրանտների վաստակած փաստացի միջին գումարը կազմել է 216 հազար ՀՀ դրամ, որը մոտ երկու անգամ ավելի է ՀՀ-ում նրանց վաստակած գումարից: Հայաստանում աշխատանքի բացակայությունն ու ցածր եկամուտը կարևոր պատճառներից են, որի հետևանքով միգրանտները ձգտում են մեկնել արտագնա աշխատանքի:

Татевик ВАРДАНЯН

Выявление проблем трудящихся-мигрантов из Армении

Ключевые слова: полевые работы, мигранты, миграционные стимулы, денежные переводы, влияние миграции на социально-экономическую ситуацию семьи

За последние несколько лет миграционные потоки из Армении находятся под пристальным вниманием, выявляя и анализируя основные мотивы и проблемы мигрантов. Очень важно анализировать причины и последствия миграции на индивидуальном уровне, и для этого сделанная полевая работа позволила понять общую картину механизма миграции. Фактическая средняя сумма миграционной работы составляет 216 000 драм, что почти в два раза превышает сумму, полученную в Армении. Нехватка рабочих мест и низкий доход в Армении являются важными причинами для мигрантов, которые хотят уехать за границу.

Tatevik VARDANYAN

Identifying the problems of labour migrants from Armenia

Key words: field work, migrants, migration incentives, remittances, the impact of migration on the socio-economic situation of the family

Over the past few years, migration flows from Armenia have been under close scrutiny, revealing and analyzing the main motives and problems of migrants. It is very important to analyze the causes and consequences of migration at the individual level, and for this the field work done made it possible to understand the general picture of the migration mechanism. The actual average amount of migration work is 216,000 drams, which is almost double the amount received in Armenia. The lack of jobs and low income in Armenia are important reasons for migrants who want to go abroad.